ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 30-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը, որը քննարկեց հանրապետության գիտնականների 1971 թ. կատարած աշխատանքի արդյունքները և գիտական հետազոտությունների զարգացման հետագա հեռանկարները։

Ժողովը, որի աշխատանքին մասնակցում էին Ա. Ե. Քոչինյանը, Բ. Հ. Մուրադյանը և Գ. Ա. Տեր-Ղազարյանցը, ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նա ասաց, որ կուսակցության XXIV համագումարը սովետական գիտնականներից պահանջեց իրենց ուժերն ու եռանդը կենտրոնացնել ժամանակակից գիտության հիմնական ուղղությունների զարգացման, գիտատեխնիկական առաջընթացի, հետազոտությունների արդյունավետության բարձրացման, ժողովրդական տնտեսության հետ կապերի ամրապնդման հարցերի վրա։

Ընթանալով համագումարի որոշումների անշեղ կենսագործման նշանաբանով, մեր հանրապետության գիտնականները հասան զգալի հաջողությունների, կատարեցին գործնական նշանակություն ունեցող մեծարժեք գիտահետազոտական աշխատանքներ։

Այնուհետև Վ. Հ. Համբարձումյանը հրապարակեց ՀՍՍՀ ԳԱ նախագահության որոշումը ակադեմիայի առավել վաստակած անդամներին պարգևատրելու նպատակով Մեծարման գիր սահմանելու մասին։ Առաջինը այդ բարձրագույն պարգևին արժանացան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Մ. Ս. Սարյանը և Ա. Ի. Խաչատրյանը։

Հանրապետության գիտությունների ակադեմիայի 1971 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքներն ամփոփող զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի գլխավոր գիտնական-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ս. Ա. Բակունցը։ Նա ընդգծեց, որ առաջնորդվելով ՍՄԿԿ XXIV համագումարի պատմական որոշումներով, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան հաշվետու տարում լայն աշխատանք է տարել գիտական հետազոտությունների խորացման և ընդլայնման, գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության հետագա բարձրացման, ժողովրդական տնտեսության մեջ գիտության նվաճումների ներդրման բնագավառում։ Հանրապետության գիտնականների ջանքերը կենտրոնացվել են բնության երևույթների նոր օրինաչափությունների բացահայտման, առաջընթացի նոր ուղիների որոշման, գիտական հետազոտությունների հետագա զարգացման ուղղությամբ։ Հաշվետու ժամանակամիջոցում ակադեմիայի 32 գիտական հիմնարկներում հետազոտություններ են կատարվել 643 թեմա ընդգրկող 134 պրոբլեմների գծով։

Այնուհետև զեկուցողը կանգ առավ հետազոտությունների արմատավորման, արտադրության հետ գիտնականների կապը ամրապնդելու հարցերի վրա։

Հանգամանորեն վերլուծվեց հաշվետու ժամանակաշրջանում ՀՍՍՀ ԳԱ նախագահության, բաժանմունքների, ինստիտուտների, լաբորատորիաների, գիտական խորհուրդների և հանձնաժողովների կատարած աշխատանքը։

Հաշվետու տարում ՀՍՍՀ ԳԱ միջազգային և միութենական գիտական կապերը էլ ավելի ամրապնդելու նպատակով արտասահմանյան գիտնականների մասնակցությամբ անց են կացվել զիտաժողովներ ու այլ միջոցառումներ։ Իրացվել է արտասահմանյան 70 գիտական գործուղում, նույն նպատակով ՀՍՍՀ ԳԱ հիմնարկները ընդունել են աշխարհի 25 երկրների 241 մասնագետների։

Զեկուցողը անդրադարձավ նաև գիտական կադրերի պատրաստման հարցին, նկատելով, որ հաշվետու տարում ակադեմիայի աշխատակիցներից դիսերտացիա են պաշտպանել 112 հոգի, որից 17-ը դոկտորական։

Ակադեմիայի 24 աշխատակիցներ պարգևատրվել են ՍՍՀՄ շքանշաններով և մեդալներով, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը արժանացել է Լոմոնոսովի անվան ոսկե մեդալի, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ֆ. Տ. Սարգսյանը՝ ՍՍՀՄ պետական մրցանակի, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Ս. Ղարիբյանը և Մ. Վ. Կասյանը՝ ՀՍՍՀ պետական մրցանակի։

Հաշվետու զեկուցման քննարկմանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ փոխ-պրեզիդենտ Ս. Ն. Մերգելյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Գ. Գ. Սնակը, Ս. Կ. Կարապետյանը, Ա. Ա. Առաքելյանը, արևելագիտության ինստիտուտի գիրեկ-

ղյունաբերությունում հումքի կոմպլեքս օգտագործման հետագա խորացում և այլն)։

Գրախոսվող գրքի ինքնարժեքի և գնագոյացման տեսական հարցերին նվիրված բաժնում կան վրիպումներ։ Այսպես, օրինակ չի կարելի հավասարություն նշան դնել հավելյալ աշխատանքի (արդյունքի) և շահույթի միջև։ Եթե տնտեսավարման նոր համակարգի պայմաններում որոշ ծախսեր շահույթի վրա են ընկնում ապա դա կատարվում է սոսկ շահույթի դերը բարձրացնելու և ոչ թե անհրաժեշտ ու հավելյալ աշխատանքի (արդյունքի) սահմանները նշելու համար։

Բավարար չի կարելի համարել համակցության բաղադրիչների միջև ընդհանուր կոմբինատային ծախսերի բաշխման հիմնավորումը (էջ 140—141)։

Բավարար խորությամբ չեն լուսաբանված գունավոր մետաղագործությունններում կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության գնահատման հարցերը։ Այդ կարևոր խնդրի մի շարք կողմեր անհրաժեշտ պարզաբանում չեն ստացել։

Նկատվում են նաև առանձին անհարկի կրկնություններ ու շարահյուսական սխալներ։

Իր ամբողջությամբ Բ. Սելվինազյանի «Ծախսերի բաշխումը համակցված արտադրության բաղադրիչների միջև» աշխատությունը արժեքավոր է և օգտակար ինչպես գունավոր մետաղագործության էկոնոմիկայով զբաղվողների, այնպես էլ մասնագետների լայն շրջանների համար։

Վ. Ե. ԽԼՂԱԹՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր